

## Տ. ԳԵՈՐԳ ՎՐԴ. ՆԱԶԱՐԵԱՆ

(1925 — 1978)

Ոչ եւս է ամէնքէն սիրուած Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեանը, որ իր մահկանացուն կնքեց 26 Սեպտեմբեր երեքշաբթի կէսօրէ ետք Հաստա հիւանդանոցին մէջ:

Հանգուցեալը, աւագանի անունով Յովսէփ, ծնած է Պարսկաստանի Լիւահան գիւղը, Թէհրանի մօտ, 1925ին: Յաճախած է ծննդավայրի ծխական դպրոցը: Կրօնաւորելու փափաք զգալով իր մէջ, դիմած է երանաշնորհ Տ. Կիրեղ Բ. Պատրիարքին եւ 1947ին զալով երուսաղէմ՝ ընդունուած է Ս. Աթոռոյս աշխատաւոր Միաբաններու շարքին եւ ստացած Ուրարակրօթեան աստիճան: Ատեն մը ծառայած է Բեթղեմի Ս. Եննդեան եւ Ս. Յարութեան տաճարներուն մէջ իրբեւ օգնական լուսարարի: Սարկաւազ ձեռնադրուած է 1951ին իսկ կուսակրօն քահանայ՝ 1952 Յունիս 1ին Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ՝ ձեռամբ հանգ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեանի եւ վերակոչուած Տ. Գեորգ:

Հայր Գեորգ Ս. Աթոռոյս մէջ վարած է կարգ մը պաշտօններ, ինչպէս հանդերձապետ, հիւրընկալ եւ ատեն մըն ալ ժամօրհնող Մայր Տաճարի: Սակայն պաշտօնը՝ որուն մէջ յարատեւեց մօտ մէկ տասնամեակ՝ Ս. Աթոռոյս Աւագ Քարգմանի կարիւր պաշտօնն էր, զոր վարեց մեծ ձեռնհասութեամբ, հակառակ իր քայքայուած առողջութեան:

Հայր Գեորգի մահով Ս. Աթոռս կը կորսնցնէ իր կոչումին գիտակից ու ծառայաւէր Միաբան մը, որ իր կարողութիւններուն համեստ չափովը ջանացած է միշտ լուսագոյնս արդիւնաւորել իրեն վստահուած պաշտօնները:

Հակառակ իր տկար կազմին, Հայր Գեորգ եղած է միշտ աշխոյժ ու մարդամօտ, եւ այդու իսկ փնտռուած անձ մը՝ ընկերային հաւարոյթներու ընթացքին, սրամիտ դարձուածքներով համեմուած իր խօսքերով վարակիչ հաղորդականութիւն մը ստեղծելով իր շուրջ:

Հայր Գեորգի դագաղը Մայր Տաճար փոխադրուեցաւ Հինգշաբթի, 26 Սեպտեմբերի կնքելու հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 29 Սեպտեմբերի առաւօտուն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հանգստեան Ս. Պատարազը մատոյց Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան: «Ողջոյն»էն առաջ դագաղը բեմ հանուեցաւ, ուր Լուսարարապետ Գեորգ Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան կատարեց վերջին օծումը, որմէ ետք նախ Միաբանութիւնը եւ ապա ժողովուրդը մօտեցաւ աջը առնելու հանգուցեալին:

Ժամը 10ին Մայր Տաճարին մէջ կատարուած հանգստեան կարգէն ետք կազմուեցաւ թաղամանական թափօրը, մասնակցութեամբ ամբողջ Միաբանութեան, հոգեւոր երգերով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ առաջնորդելու հանգուցեալը իր յաւիտենական կայքին: Ս. Փրկչի գերեզմանատան մէջ դագաղը հողը իջեցնելէ ետք թափօրը զլիսաւորող Լուսարարապետ Սրբազանը խօսեցաւ ազդու դամբանական մը, վեր առնելով պարտաճանաչ ու բարի հոգեւորականի յատկութիւնները հանգուցեալին:

«Սիոն», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր, կը վշտակցի հանգուցեալի հարազատներուն եւ կը մաղթէ որ Տէրը իր լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր բարի հոգին: